Նախագիծ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____2013թ. N ____ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՍԵՎ ԵՎ ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն որոշում է.

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ երկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնի անհատույց օտարումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ համաձայն հավելվածի:

Ա. Մովսիսյան

հ/հ	Մետաղի ջարդոնը	Ջարդոնի քանակը (տոննա)
1	Սև մետաղ	1500
2	Պղինձ	120
3	Ալյումին	40
4	Կապար	40
5	Դինամո (էլեկտրատեխնիկական) պողպատ	250

Տեղեկանք-հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնն օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1.	**Անհրաժեշտությունը**
	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա են սև և գունավոր մետաղների ջարդոն: ՀՀ պաշտպանության նախարարությունը դիմել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը սույն որոշման հավելվածում նշված քանակությամբ ջարդոնը իրենց անհատույց օտարելու խնդրանքով:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Սույն որոշման նախագծով հանձնարարվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին ապահովել նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնի անհատույց օտարումը ՀՀ պաշտպանության նախարարությանը:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	-
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	ՀՀ պաշտպանության նախարարության կարիքները հոգալու նպատակով սև և գունավոր մետաղների ջարդոնի անհատույց օտարում վերջինիս:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**
	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ:
6.	**Ակնկալվող արդյունքը**
	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնի անհատույց օտարում ՀՀ պաշտպանության նախարարությանը:
7.	**Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)**
	-

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնն օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնն օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնն օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ընկերություններում առկա սև և գունավոր մետաղների ջարդոնն օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: